ծնողաց իմոց, հօրն իմոյ Դալվաթի և մօրն իմոյ Մարիամին, և դահեակ սնուցիչ երկու քոռն իմոյ Սառին, Ցաբաքին ողորմութեան. աղաչեմ կենաց։ Շինեցաւ սուրբ եկեղեցիս ծեռամբ Յակոբ վարդապետին. ի թվին :ՌՃԼԱ։ (1682)։

Հրատ. Ջալալեանց, II, 262։ Բարխուդարեանց, 73։

61. ՄԱՄԱՏԱՁՈՐ ԳՅՈՒՂ

601. Ս. ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑՈՒ մուտքի բարավորի վրա.

թվլին՝ :ՌԾ։ (1601)։

Հրատ. Բարխուդարեանց, 72։

602. Ս. ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսային կամարի վրա՝

Ես Ազարիա արդաւ, Դաւիթ էրեց, որ շինող եկեղեցոյ · · ·

Հրատ. Բարխուդարեանց, 72։

603. Ս. ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսային կամարի այլ երեսին՝

Խաչս Բաղդասարին է. իւր կողակցին · · ·

Հրատ. Բարխուդարեանց, 72։

62. ՏՈՒՄԻ ԳՅՈՒՂ

Գյուղից հարավ, ձորակով անջատված հարթության վրա սփռված են հին հուշարձանների մնացորդներ։ Համեմատաբար լավ է պահպանվել անտաշ քարերով շինված մի փոքր թաղակապ եկեղեցի, որը կոչվում է «Կարմիր եղցի». եկեղեցու ծածկը և հարավային պատը փլված են. հնում նրա արեմտյան պատուհանի միակտուր պսակի վրա եղել է :ՆԽԹ: թվականի արձանագրություն։ Պսակի այդ քարը կոտրված է երկու մասի, մենք գտանք դպրոցի միջանցքում կազմակերպված փոքրիկ թանգարանի հնագիտական այլ իրերի կողքին, որոնք հավաքել էր ուսուցիչ Ամիրջանյանը։ Այժմ այդ քարը տեղափոխված է Ստեփանակերտի Գավառագիտական թանգարան։

Եկեղեցու շրջապատը գերեզմանատուն է. հին ու նոր տապանաքարերի մեջ գտանք միայն մի փոքր և գեղաքանդակ խաչքար, որն ուներ :ՌԿ: թվականը։

Եկեղեցուց հարավ, թմբերի վրա նշմարվում են շենքի հիմնապատերը, որը համաձայն ավանդության կոչվում է «Թագավորի պալատ»։ Սրանից քիչ հեռու, մի այլ թմբի վրա մատուռի հիմնապատերն են, որոնց մոտ գտնվող մի մեծ և անարձանագիր տապանաքարը նույն ավանդությամբ կոչվում է «Թագավորի գերեզման»։ Գյուղի և այս հնավայրի արանքում եղած աղբյուրը, որի վրա սրբատաշ քարերով ծածկ կա, կոչվում է «Թագավորի աղբյուր»։

Այս գյուղը եղել է Ապումուսէ իշխանի նստավայրը, որը պատերազմեց Բուղայի հետ՝ Գտչա բերդում։ Արձանագրության մեջ «Թագավոր» անվանված Գագիկը Ապումուսէի—Մուսէի ժառանգն է։ Այսպիսով, իշխանական այս տոհմին է պատկանել Գտիչ բերդը IX դարում, որի մոտ գտնվում է Տումի գյուղը։

604. ԿԱՐՄԻՐ ԵՂՑՈՒ պատուհանի պսակի վրա, 5 տող.

✠ ԻՆԽԹԹՎՂ ԵԻԻ
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՍՆԳԱԳԻԿԱՈՐԴՈ
ՄՈՒՍԷԻԵՍՍՈՓԻԴՈՒՍՏՐՄՈՒՍԷԻՇԻՆԵՑԻ
ՄՈՒՆԱՅԻՓՐԿՈՒ ԹԻՒՆՀՈԳԻՈՒՄԵԻ
ԾՆՈՂԱՑԻ ՄՈՑ

Ի :ՆԽԹ: (1000) ԹՎԼԻՆՅ ՀԼԱՑՈՑ, ԵԻ Ի|ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՏՆ. ԳԱԳԻԿԱ. ՈՐԴՈ| ՄՈՒՍԷԻ. ԵՍ ՍՈՓԻ ԴՈՒՍՏՐ ՄՈՒՍԷԻ ՇԻՆԵՑԻ| ՏԻՒՆ ԱՑ. Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳԻՈ ԻՄՈ ԵԻ| ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ։

Հրատ. Բարխուդարեանց, 79— (ՍՈՓԻ փոխարեն ՈՍԿԻ)։

605. ԽԱՉՔԱՐ, փոքր, գեղաքանդակ, դրված է նոր գերեզմանի վրա. թևերի շուրջը.



63. ՏՈՂ ԳՅՈՒՂ ԵՎ ՇՐՋԱԿԱՅՔ

Հին ու նշանավոր է այս գյուղը, որ գտնվում է հինավուրց Քթիշ լեռան արևելյան փեերին (լեռան գագաթին է Քթիշ բերդը)։ Գյուղն առավել անվանի դարձավ XVIII դարի սկզբներից, երբ այնտեղ հաստատվեց Մելիք Եգանը։

Գյուղում կան արձանագրություններ ունեցող հետևյալ հուշարձանները.

Ա. Ս. Ստեփաննոս եկեղեցի. գտնվում է գյուղի հյուսիսային եզրին՝ գերեզմանատան մեջ Թաղածածկ փոքր շենք է, կառուցված ճեղքված քարերով։ Անսովոր կերպով եկեղեցու մեջ կանգնած է մի մույթ, որը սրահը բաժանում է երկու մասի, ըստ որում հյուսիսային մասն ավելի նեղ է։ Այդ նեղ մասում հնում եղել են տապանաքարեր։ Եկեղեցու շինության ժամանակը հայտնի չէ, արևմտյան միակ մուտքի ճակատին գրված Մելիք Իսայու արձանագրությունը հաղորդում է 1747 թ. ծածկը նորոգելու մասին, բայց եկեղեցու պատերի մեջ ագուցված բազմաթիվ հին բեկորների վրա կան ավելի հին թվականներ. ամենահինը՝ 1421-ից։

Բ. Գերեզմանատուն. Ս. Ստեփաննոս եկեղեցին շրջապատում է երեք կողմից, որի մեջ ցաք ու ցրիվ ընկած են խաչքարերի բեկորներ, իսկ տապանաքարերի մեծ մասը անգիր է. մի քանիսի վրա կան կենցաղային քանդակներ։

Գ. Անապատ. գտնվում է Ս. Ստեփաննոսից մոտ 150 մետր արևմուտք, թեք լանջի վրա. փոքր թաղածածկ շենք է, այժմ կիսավեր, շրջապատում կան խուցերի ավերակներ, այստեղ միայն մի արձանագրություն է եղել նախկինում, որից կարելի է կռահել, որ եկեղեցին կոչվել է ս. Վարդան։ Անցյալում եղել է կույսերի անապատ, որը հաստատվում է նաև № 643 արձանագրությամբ։

Դ. Մելիք Եգանի ապարանք. գտնվում է գյուղի կենտրոնում, հնում ունեցել է բրգավոր շրջապարիսպ, որը մասամբ է պահպանված՝ դարպասի հետ միասին։ Շինված է սրբատաշ քարով, երկհարկանի է, ներքին հարկը քարածածկ. վերին հարկն ունի պատշգամբներ։

Գյուղը այժմ էլ շեն է և բնակելի։ Ապարանքի ներքին հարկի գեղեցիկ ձևավորված մուտքի շուրջը փորագրված է Մելիք Եգանի ընդարձակ հիշատակագրությունը, տեղական բարբառով և բովանդակալից։

Ե. Ս. Հովհաննես եկեղեցի. գտնվում է գյուղի մեջ, բարձրադիր թաղում. շինված է սրբատաշ քարերով, չորս սյուների վրա և թաղածածկ շենք է. շինված է համարվում Մելիք Եգանի կողմից, բայց հավանաբար հնի տեղում։ Եղել է Մելիք Եգանյանների տոհմական տապանատունը։ Եկեղեցին բաց անելու և արձանագրություններն ստուգելու հնարավորություն չունեցանք, առնում ենք նախորդ հրատարակություններից։

Զ. Անհայտ հուշարձան. Տող գյուղից Ֆիզուլի քաղաքը (Կաբյագինո) տանող ճանապարհի ձախ եզրին բարձրացող բլրի գլխի հուշարձան։

Ժողովածուի մեջ գյուղի և շրջակայքի հուշարձաններից հավաքված են 36 արձանագրություն, որոնցից 27-ը հրատարակում ենք առաջին անգամ։

Որպես հավելված բերում ենք նաև մասունքների վրա եղած արձանագրությունները։

Ս. Ստեփաննոս

Եկեղեցու շինության և նորոգումների ժամանակ, նույնպես և հետագայում՝ պատերի մեջ ագուցված են հին խաչքարեր և տապանաքարեր՝ մանր հիշատակագրություններով. այդպի-